

նելու համար : Փորագրութեան , զարդա-
րանքի , ընդելուզման գործողութիւնները
կ'ընէին՝ զանոնք պաղեցընելէ յետոյ :

Պր. Նովէլլի՝ հնութեանց ճշմարիտ սի-
րահար մը ճանչցուած՝ կը գրէր Պր. փար-
տոյի այցելատետրին մէջ՝ թէ իրեն վա-
ճառանոցը մտած ժամանակ՝ զուիւր կը
դառնար . և Սառա Պեռնար յաճախ կ'այ-
ցելէր իրեն՝ անոր արուեստին նախանձե-
լով , որովհետեւ... քննադատութիւնն՝ իւր
գործերուն շատ չի խառնուիր : Փիէրֆոն
Մոռկանը հոն՝ միայն իւր միլիարատէրի
ստորագրութիւնը չէր որ կը թողուր՝ այլ
վերջին անգամ երբ եկաւ՝ 1,200,000
ֆրանքէ աւելի ծախք ըրաւ : Մեկնեցաւ՝
յետ ընտրելու 8-900,000 ֆրանքաց
արժողութեամբ մեծագին առարկայներ :
Բայց երբ Անգղիոյ զեռպանին հետ իւր
գնած առարկայներուն վրայ խօսած ժա-
մանակ՝ իմացաւ թէ իրենց ցոյց տուած չէին
ամենահարուստացիւտ սափոր մը , կայծակի
պէս նորէն նոյն վաճառանոցը դիմեց , և
իրեն պայծառ ու փայլակնացալտ աչքերը
իւր մեծղի ըթին վրայէն փարտոյի վրայ
տնկելով , ըսաւ .

— Դուն ինծի հետ գէշ վարուեցար .
զիս ապահովուցիք թէ ամէն բան ցուցեր
ես . սո՛ւտ է :

— Տէր Աստուած , ես ամէն բան ձեզի
ցոյց տուի :

— Իրաւ :

— Ամէն բան , ինչ որ ունիմ , կամ լաւ
եւս՝ ամէն բան զոր կրնամ ծախել . վասն
զի ես ալ իմ ճաշակա ունիմ , և չեմ փա-
փաքիր զիս ձգելու այնպիսի փորձութեան
մը մէջ՝ որով պիտի զրկուիմ առարկայէ
մը , զոր՝ ձեզի պէս մէկը՝ գնելու համար
ամէն միջոց ունի , երբ ուզէ անպատճառ
գնել :

Միլիարատէրը հանգարտեցաւ :

— Տեսնենք , փարտոյ , ո՛ր է ըու թան-
կազին սափորդ :

Էւ փարտոյ զանիկայ ցոյց տուաւ :

Մոռկան քննեց , զննեց , ուզեց գիտնալ
ուսկի՞ց կու գայ և ի՞նչ է գինը :

Ընտրեց զեւ ուրիշ երեք կամ չորս կտոր-

ներ ալ , աւելի փոքր արժողութեամբ , և
ամենուն համար միասին՝ 400,000 ֆր.
ալ ընծայեց անմիջապէս :

Ամենազգաւոր փարտոյ չկրցաւ դիմա-
դրել , և այսպէս՝ հառաչելով բաժնուեցաւ
իւր սիրելի սափորէն , վերապահելով սա-
կայն ուզածին չափ անոր վրայ հիմնալու
իրաւունքը , ամէն անգամ երբ Նիւ-Էոքը
երթալու առիթ ունենայ , ինչ որ տարին
երեք կամ չորս անգամ կը հանդիպի :

Թարգմ. Հ. Ա. ՅՈՒՍԷՒՄՈՒՆ

Կ Ր Թ Ա Կ Ա Ն



ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՌՈՂՁԱՊԱՀՈՒԹԻՒՆ

(Շար . տե՛ս էջ 228)

Շնչոյսական մեքենային գլխաւոր մասը ,
քիթաբերնին վերջը՝ է իռչակը , որ լուրջ-
բու օդանցոյց առաջին խողովակն ըլլալով
հանդերձ՝ է նաեւ ձայնի գործարարը :

Խոչակը կ'աւտած է լեզուի արմատին , կը
կենայ վիզին մէջ , շնչափողին անմիջապէս
վրան , որոտախնին ու սրկորին առջեւ : Զա-
գարածեւ է այն , և կը բաղկանայ կարգ մը
կոճիկներէ , որոնց միութեամբ կը ձեւաւայ
աուփիկ մը՝ որ կը գոյանայ Զայնը :

Այս կոճիկներուն երեք հասն անզոյգ են .
անոնց գլխաւորն ու մեծը կը կաշուի սա-
պարիկ կամ սապարտածեւ կոճիկ (Cartilage
thyroide), որ կիսաբաց գիւրդի մը ձեւն
ունի գրեթէ , և իւր վրան կը կրէ տեղեւիկ
կամ տեղեւեւածեւ (Epiglottis) անուն շար-
ժուն կոճիկը : Սա իւր ծածկոց կը ծառայէ
խոչակին , և կուլի ժամանակ կը գոցէ անոր
բերանը , որդէս զի կերակուրի կառններ իւր
մէջը չմտնորեցնով՝ ուղղակի երթան ինչան
սրկորը : Ասպարիկին ներքեւ կեցած է մու-
տակեակ կամ մատակեւածեւ (Cartilage cri-
coide) կոչուած ճանախաւոր՝ բայց ճանախ
եսեւ պարձած՝ կոճիկը , որուն անմիջապէս

շարունակութիւնն է շնչափողն՝ իր օդաշար կոճիկներով:

Խոչակը կրնանք շօշափել մեր վիպին վրայ և մատով զգալ անոր մէկ սուր կէտը՝ այրերու քով աւելի ցլցնել, որ ծանօթ է Ադամահնձար յորջորջումով:

Խոչակը բացի այս կոճիկներէն՝ ունի դեռ երեք զոյգ ուրիշ կոճիկներ, որոնցմէ կը յիշեմ՝ ձեզ Սանդորինեան կոչուած եղջիւրաձեւ ալ ու ձախ կոճիկները, որոնք գրեթէ իրարու մօտիկ կեցած են մտաւանակի ճանաչելի վրայ, և ձայնի արտադրութեան և շնչաւսութեան ժամանակ ունին կարեւոր դերեր:

Խոչակը կազմող կոճիկներն իրար միացած են յօդաւանդով, և իրենց վրայ կը կրեն շատ մը փոքրիկ գնդերներ, որոնք ձայնի զործադրութեան տառն կը ձգտին ու կը կոճկին:

Ձայնի բուն զործարարն էր բաղկանայ ալ ու ձախ երկու փոքրիկ գնդերը. ասոնք իրենց ետեւի ծայրերով առանձին առանձին Սանդորինեան կոճիկներու արմատին կայած՝ առիւծի ծայրերով կու գան միասնալու կէտի մը վրայ, Աստորիկին յերբքին էջին ամենէն զօգտօր մասին մէջ, որ կը համապատասխանէ Ադամահնձորին:

Այս լարերն իրենց այս դերքով՝ մասաւնեակին վրայէն կը կտրեն կ'անցնին, յօրինելով եռանկիւն մը՝ որուն սուր գագաթն առաջ կը հայկ և յատակն ետեւ: Այս երկու լարերն են ահա Ձայնային լարերը (Les cordes vocales), որոնք ձեռացուցած եռանկիւն միջոցը կը կաշտէ՝ Հագագ (Glotte). Հոս է ձայնի բուն աղբյուր:

Ձայնային լարերը՝ խոչակին մէջ քով քովի՝ կը ձեռացուեն կատարեալ շրթունք մը, որոնք շնչառութեան ժամանակ կը բացուին օդին անցքը դիւրացունելու, բայց շնչաարտութեան ժամանակ կը զգտաին դարձեալ. այս շրթունքին թրթումովն է որ յառաջ կու գայ Ձայնը:

*
**

Ձայնը՝ ստորին գասակարպի կենդանիանալու քով քնաւ գոյութիւն չունի, և հագել զգալի է այն՝ նախ միջատներու քով, որոնց

մէ անկատարներն ալ՝ աւելի թեւեռու կամ անպաշտօնաւ աղմուկ մըն է որ կը հաննի, բան թէ իրապէս ձայն բուռածը: Կատարեալ լազայն միջատներու քով, զոր օրինակ ճրպուրին, կը սկսի արտայայտութեան միջոց ըլլալ այն, որովհետեւ յառաջ կու գայ յատակ զործարարն մը, զոր կենդանին իր աւազածին պէս կը ձայնէ կամ կը լսէ. սակայն հոս ոչ եղածը ոտով աղաղակ մըն է միօրինակ և անփոփոխ, սրով՝ միջատն իր ներկայութիւնը միայն կը զեկուցանէ: Ռարձր գոտակարգի կենդանիներու քով է՝ որ ձայնը կ'անհնայ ճկունութիւն, յատկութիւն մը՝ որով կամայական դիտաւորութեան ճշգրտապէս հսկողական կը յարմարի այն. այսպիսի կենդանիներու քով ձայնի կազմութեան համար կը տեսնուի յատուկ և տարբեր գոյութիւն մը, որ ոչ այլ ինչ է՝ բայց եթէ շնչողական խոցովակի մէկ մասնաւոր սեղան թրթուոն միմանի և այլ թրթուոն սեղան շնչաարտած օդին անցնիլը:

Բայց մարդուն քսիւ է միայն, այս, մարդուն քով միայն, որ ձայնն արտայայտութեան ամենամեծ կուն և երկնայեղ զործարարն մըն է, և անոր բոլոր միւս զործարարներն ալ գերազանցն ու հրաշակերար: Անպաշտօն թէւ աշխույժ ձեւեր կ'ունեն, բայց այդ ձեւերով կը բացարարեն եւթ ինչ որ յայտնի և ինչ որ պարզ է: Դէմքի գնդերներ կրնան այս արտայայտել հոգեկան վիճակներ, այլ ոչ հաւատարիմ ճշգրտութեամբ, մանաւանդ որ այդ գնդերներու խաղը, շարժումը, շատ անոյամ կրնան կամքէ բուրրովին անդախտ կերպով և ջգային գոյութեան անդադարձիկ զօրութեան շնորհիւ՝ ինքնաբերաբար ոչ սեղի ունենալ, որով անոնք մարդի խորհուրդներուն աւելի մատնիլը կ'ըլլան՝ քան թէ բուն արտայայտիչը: Միայն ձայնն է՝ որ պահանջուած ճշտագաւորութիւնն և ճկունութիւնն ունի՝ մարդի արտայայտութեան ամենակատարեալ ու հաւատարիմ միջոցն ըլլալու. իր այդ յատկութիւնն է որ խօսքը կը ծնի, խօսքը՝ այսինքն յօդաւորեալ ձայնը՝ մարդուն միայն սեղանական, մարդուն միայն յատկանի:

*
* *

Ինչպէս կը ծնի ձայնը . գործարանային ինչ փոփոխութիւններ տեղի կ'ունենան տնոր յառաջ եկած ժամանակ :

— Ձայնը՝ պարզապէս արդիւնք է շնչաարութեան . երբ ձայն մը արտաբերելու զօր, ինչ որ կամքին թելադրութեամբ կը պատահի, անզգալապէս ուժեղութիւն մը կը արուի շնչատարութեան, որով հազազը նոյն հետայն կը նեղնայ, ձայնային լարերը գրեթէ իրարու կը հպին . այդ պահուն թուրքին շնչատուած օդը լուսութեան ժամանակի պէտապատ և անարգել գուր չի կարենալ ելլալով՝ այլ ծանր ծանր, ձայնային լարերու հանդիսար կը վրդովէ, զանոնք իրենց տեղերէն կը շարժէ . այդ շարժումին ազդեցութեամբ կը կծկին անոնք, կը թրթռան առնոց թելերը, որոնք կը ծնին ահա ձայնը . ճիշդ այնպէս՝ ինչպէս մեր շրթները ձայն կը հանեն երբ զօրաւոր փչումով մը Բ կամ Փ տառերն արտառանելու պնդնք :

Ձայնային լարերու թրթռումին ժամանակ՝ ոչ միայն հազազն է գործողը, այլ անոր հետ նաեւ խոչակն իր մէջ մի յօգուածներով, Կնդերներով, կոկորպն ու լուքային զանգուածն իր ամբողջութեամբ . կուրծքն ու ուտածնը, և ասոնց հետեւողութեամբ ալ՝ սիրտը, փորը, աղիքները : Այս շարամանեալ գործունէութեան միջոցին, ամէն գործարան իր բնական վիճակին մէջ վայրկեան մը կը կրէ նորանոր շարժումներ և փոփոխութիւններ, ինչ որ շատ պարզ է հասկնալ :

Երբ ձայն մը հաննք կամ խօսք մը արտառաննք, մեր թուրքին այդ պահուն շնչաարելի օդն՝ հազազային առժամայն անձկութեան պատճառաւ՝ խոչակին մէջէն զանդաղարար անցնելուն, թուրքին փշարկներէն ալ ուշ կը պարպուի, որով ատենք շուտափոյթ կծկումէ պահ մը զիրի գտնուելով՝ թուրքը վազանցիկ կերպով ուղած վիճակի մը կ'ենթարկեն . բայց որովհետեւ շատ ու շատ շուտով թարմ օդի կարօտ կ'ըլլանք, մենք կը ստիպուինք ձայներնիս կամ խօսքերնիս ընդ-

հատելով՝ երկար ու խորունկ շունչեր առնել . այն ատեն է ահա՝ որ աւելի շատ քանակութեամբ օդ և արիւն կու գան մեր թուրքուն մէջ, և թուրքային քլիշները կը հարկարեն մեծնալ, լայննալ, որպէս զի կարենան տեղի տալ նորեկ օդին և արիւնին և անոնց շատութիւնը պարունակելու ընդունակ ըլլալ : Լուս կեցած ժամանակնիս այսպիսի բան չի պատահիր մեր թուրքուն մէջ . օդն ու արիւնն իրենց սովորական չափովը կը մնան կ'ըլլան հոն, և եթէ լուսութիւն երկար տեւէ՝ մինչեւ իսկ կը նուազին անոնք իրենց քանակութեանը մէջ :

Անոնք որ շատ կը խօսին, շատ ձայն կը հանեն, անոնք իրենց թուրքը կը մեծցանեն, կուրծքերնիս կ'ընդլայնեն տակաւ . իսկ առնոց որ քիչ կը խօսին և գրեթէ լուս կ'ապրին, ընդհակառակն իրենց թուրքը կը մանան կծկուուն, մարած, սմբած վիճակի մը և կ'ըլլան նիհար ու վախտ : Գիտենք որ բարձր ձայնով կարգալը, բարձր ձայնով խօսիլը շատ հին ժամանակներէ ի վեր և այսօր՝ ամենօրեակար միջոց մը համարուած է կուրծքի տողջապահութեան . զի տենք որ մեծ բեմաւառները, հրապարակասիրն ու նշանաւոր քարոզիչները շատ լայն ու զիրակ կուրծք կ'ունենան, ու զիտենք նաեւ՝ որ ի ծնէ խուլ-համբերն ալ շատ նեղ, շատ վախտ կուրծքի տէր կ'ըլլան . պատահաւ՝ առաջիններուն ձայնային գործարանին յաճախակի աշխատութեամբ՝ թուրքուն հետզհետէ ստացած զարգացումն է, և վերջիններուն ալ այդ գործարանին անաշխատ յուլութեամբը՝ շնոդական մեքենային ունեցած նիհարութիւնն է կամ անզարգացած վիճակը, որ շատ շուտով կը սկսի սրբադրուիլ, երբ այդ համբերը գիտութեան անօրինակ արդի բարերար միջոցներով առկա խօսք արտառանելու ուսանին :

Այս է ահա ձայնի արտաբերութեան ժամանակ՝ շնոդական ու ուրիշ գործարաններու կրած ազդեցութիւնները, որոնցմէ առաջնորդուելով՝ այժմ գիբաւ կրնանք հասկնալ այն օգուտները՝ զորս Ձայնական Երաժշտութիւնը կ'ունենայ կուրծքի և բոլոր գործարաններու վրայ :

*
* *

Ի՞նչ գործադրութիւններ որ թուքերու մէջ տեղի կ'ունենան ձայնի կամ խօսքի ժամանակ, նոյնն աւելի առատ և աւելի հոծ և աւելի ընդարձակ կերպով կը պատահի Չայնական Երաժշտութեան, այսինքն՝ ձայնով երգ մը երգուած պահուն. զի գիտցէ՛ք որ Չայնական Երաժշտութիւնն ալ, ձայնային լարերու այդ տարբեր կերպ թրթռումները, զարձեռալ արդիւնք են շնչատարութեան:

Երգի ժամանակ՝ երգիչին թուքերն ալ աւելի ուռած, ալ աւելի լեցուն վիճակ մը կ'ունենան, շնչատարութիւնն աւելի ծոռի, աւելի երկար տեւելուն, աւելի դանդաղ աւարտելուն համար. որովհետեւ թուքերէն զուրս փչուած ուր շարունակ ձայնային լարերը թրթռացունելով, զանոնք իրարու շատ կը մօտեցունէ ու խռակին անցքը կը գոյց, որով շնչատարելի օդն երկար առեն կ'զգեցնելով թուքային բլիթներու մէջ, կը ճնշէ ու կ'ընդլայնէ զանոնք. բայց որովհետեւ երգսով առանց նոր շունչի առնելու, առանց իւր թուքերուն մէջ թարմ օդ մտցունելու՝ չի կրնար երկար երգել, զի թուքաբլիթներու մէջ եղած արիւնը թթուաբոսորութենէ արդիւնելով՝ կրնայ խեղ-զամահ բլլալ, ուստի կը ստիպուի ընդհատ ընդհատ հանգուցներ տալ իւր երգին, ու այդ ատենները՝ խորունկ ու լայն շունչի առնել, որպէս զի թուքերն հալահրէ և կարենայ երգելն անվնաս շարունակել: Այդ միջոցին է ահա՝ որ անոր կուրծքը փռոցի պէս շուտ շուտ կ'ելլայ կ'իջնայ, ինչ որ կը նշանակէ թէ ամէն մէկ ելելէն աւելի շատ քանակութեամբ օդ անոր թուքերուն մէջ մուտ կը գտնէ, այսինքն թէ երկիւր լիթնոք կը շնչէ:

Այս կերպ շնչումի շտրկին է՝ որ թուքային բլթիկներու մէջ ծալուած կամ սրմքած, անարիւն և հիւսնոց բլթիկներ ելէ կան, կը բացուին, կ'արթննան կը սկսին գործել, կենդանանալ, և այսա՝ թուքային պարունակութիւնը կամ ծաւալը ընդլայնելով ընդլայնել:

Չայնական Երաժշտութիւնն այսպէս թուքային բլթիկներու ընդլայնութիւնն ստատարած ատեն, յայտնի է որ շուտափայթ կծկումներ

կը պատճառէ այն մանրիկ մանրիկ դնդերներուն, որոնցմով հիւսուած են՝ ամբողջ թուքային բլթիկները: Այս կծկումներով՝ այդ դնդերիկները սովորականէն աւելի կ'աշխատին, մարդանքի մը ենթարկուած կ'ըլլան. ուստի իրենց մէջ տեղի ունեցած քիմիական փոխանակութիւններն առատօրէն կատարուելով՝ իրենք ալ կը զօրանան, կ'ամբանան, թուքաբլթիկային դնդերիկներուն հետ նոյն հետաքնն կը կծկուին նաեւ ցնցուղիկներու, ցնցուղիներու, խռակի, շնչափողի ու վիզի և գէմքի կազմութեանը մէջ մտնող դնդերները, և նաեւ լանջային վանդակին ներսը և դուրսը և շորսղին ու կոնակը ծածկող դնդերները, և տոնոց միջոցաւ ալ ուսերու ու թեւերու դնդերները: Ստաման արագ տրագ կ'ելելէ, և այլու՝ ստամբսի և աղիքներու վրայ կ'ընէ շուտ շուտ՝ բայց հեղիկ ճնշումներ, տեսակ մը մարձութեան, որոնք աւելորդ չէ լսել՝ թէ բարիբար ապիցցութիւններ կ'ունենան մարտապական ընդհանուր գործադրութեան վրայ:

Թորային այլեւայլ դնդերներու այս կերպ կծկումները՝ շնչողական մեքենային գործունէութեան կու տան վառ կենդանութիւն մը, որիկէ ազգուելով և սիրար՝ ինքն ալ կը սկսի ուժով կծկումներ ունենալ, շատցունել իր արտփոխներուն թիւը, սրով աւելի շատ քանակութեամբ սեւ արիւն կը յղէ թուքաբլթիկներուն մէջ մաքրուելու, և աւելի շատ քանակութեամբ ալ կարմիր արիւն կը ստանայ, մարմնային ամէն կերպ հիւսուածքին մէջ ծաւալելու և անոնց բլթիկային կեանքը վերանորոգելու:

Արեան շրջագայութեան այս փութկոտութենէն կ'օգտուի անմիջապէս ուղեգր. անոր մէն մի բլթիկներն արագ արագ նոր արիւն ստանալով՝ կը վերագարմնուն, և այս գարծուէն՝ բոլոր զգայաբաններու, ամէն տեսակ զգացումներու կեդրոններն ալ կ'ունենան անդէն ոգեւորութիւններ, սր սղնածուծի և բոլոր ջիղերու միջոցաւ կը փոխանցուի ամէն գործարաններուն մէջ, և անմիջապէս կ'արտայայտուի՝ անոնց եռանդուն պաշտօնավարութիւններով:

Անհատաաղի թուին դուցէ ձեզ այս պատ-

մածններս, որոնք ալոխնք են այս՝ ձայնական երաժշտութեան, բայց վստահ եղէք թէ ամէն ալ ճշմարտութիւններ են, գիտական ճշմարտութիւններ, զորս հոյակապ փորձերով հաստատած են՝ Գլոտ Պլանուս, Մառէ, Շտարանթիէ, Շառլ Ռիշէ, Տօփէլ և ուրիշներ։

Ձայնական երաժշտութեան թոքերու, սրբախի, ուղեղի, կուրծքի և բոլոր գործարաններու վրայ բրած ազդեցութիւնն, այսպէս՝ բնաւ չի տարբերիր մարմնամարդական ուրիշ կրթութիւններու ազդեցութիւններէն։ Մարմնամարդութեան պէս դնդերներու կծկում յառաջ բերելով է՝ որ պատմած օգտակարութիւններուս արտադրիչ կ'ըլլայ այն։

Ըստ այսմ՝ երգելն առողջապահական գերնախիր միջոց մըն է։ Թոքերու, խոչակի, կոկորդի և բոլոր զգայարաններու առողջութեան ազդու դարման մըն է։ Երգեցողութեամբ մարդուս կուրծքը կը մեծնայ, կ'ընդլայնի, կը դերնայ և ամբողջ մարմինն առողջ կ'ըլլայ։ Միաքինիսկ բերէք պահ մը երգչիներ՝ եթէ կը ճանչնաք, և պիտի տեսնաք՝ որ անոնց ամէնքն ալ լայն ու պարարտ կուրծք ունին, Հերքիլեսն կազմուածք մը։ Երգողներն ընդհանրապէս զիրուկ կ'ըլլան, և պատմածն ուրիշ բան չէ՝ բայց եթէ անոնց շարունակական երգելովով թոքային բջիջներու հետզհետէ ոտացած ընդլայնումն, և ասոնց մէջ միշտ առատ թթուածին մանալն ու շատ արիւն շրջադալիլը։ Այս իրողութեան ապացոյց են նաեւ մեր քահանաներէն և վարդապետներէն շատերը, որոնք իրենց աշխարհականութեանը նիհար, վախ ու սոփոյն, եկեղեցական ասպարէզը գրկելէ ժաւանակ մը վերջն սկսած են գիրնալ և չափազանցօրէն գիրնալ։ ասանկներու համար՝ վիզերէն հաստըցաւ կ'ընենք և կը կարծենք թէ եկեղեցական ասպարէզին մէջ օրէ օր լաւ կամ բարեկեցիկ վիճակի մը տիրանալուն է որ կը գրինան։ շատ սխալ, անոնց առողջ գիրութեան պատճառը դրամի շատութիւնը չէ՝, այլ քահանայ կամ վարդապետ ըլլալէ յետոյ՝ անոնց ամենօրեայ երգեցողութիւնները, զի այդու՝ անոնք ամէն օր ժաւ մերով շնչողական մարզութիւններ ըրած

կ'ըլլան, մարզութիւններ՝ որոնք նախ թոքերը կը կենդանացունեն, ապա ամբողջ մարմինին առողջութիւնը կը հաստատեն։

Այս օրէնքով է՝ որ փոքրիկ շրջուն վուճառականները, առաւելն մինչեւ երեկոյ պոռոշով կանչելով բան ծախողները՝ կ'ունենան լայն, գէր ու առողջ կուրծք։ անոնց պօռչառուքը՝ թէև զուրկ հաճոյ և ներդաշնակ եղանակաւորութենէ, երբի պէս կ'ազդեն անոնց թոքերուն, և արդէն՝ բաւ է որ խոչաւ կը, թոքերը, և այլն, ենթարկուին որ և է ձայնական կրթութեան մը, ըլլայ այն երգ կամ պօռչառուք, ալոխնքը միեւնոյնն է։

Նորածին երախայ մը կամ փոքրիկ մանուկ մը երբ կու լայ, կը ճչէ, կ'աղաղակէ, գիտցէք թէ այդու բնութեան շատ իմաստուն, շատ օգտաւէտ մէկ պահանջը կը գահացնէ։ Եթէ երախայներու, պղտիկներու լացերը, պօռչները չըլլան, ո՛չ անոնց ձայնի գործարանը կը զարգանայ, ո՛չ ալ խօսքը՝ ու շունչի գործարանները, և ի՞նչ են անոնց պօռչները, կանխորոշաները, ո՛չ ապաքէն ձայնային լարերը կը թրթռան դարձեալ այդ միջոցին, ուստի՝ տեսակ մը ձայնական երաժշտութիւն են անոնք, տեսակ մը երգեր այս, բայց անեղանակ, միօրինակ և զուրկ արուեստի շարունակէ։

Ձայնական երաժշտութիւնն այնօր բժշկութեան մէջ ալ պարմանարանական ոքան չելի միջոց մը համարուած է։ շատ մը նշանաւոր բժիշկներ՝ որպէս՝ Լակրանտ, Մօսսո, Տրմէ, Կլէնառ, հզօր բախասն մը սեպած են զայն, շնչողական մեքենային յատուկ մարզութիւններուն (exercices respiratoires) ամենէն կարեւորն ու պիտանին։ Կուրիդի, խոչակի, ցնցղային և թոքային կարգ մը հիւսնակութիւններու, հէն փտաբորբի (pleuresie chronique), բուժումին համար՝ շատ անգամ կը յանձնարարուի այսօր ձայնական երաժշտութիւնը, և մայային ու ջղային կերպ կերպ վիճակներու համար շատ բարերար, ապաքինիչ և բուժիչ յատուկութիւններ ընծայուած է անոր։

Յայտնի իմն է և պարզ, որ երբ ձայնական երաժշտութեան ազդեցութեամբ՝ մարմինի գործարանային բոլոր գրութիւնները

և անոնց պաշտօնավարութիւններն ատող լինեալ մը հետզհետէ կ'ունենան, հոգեկան գործառնութիւններն ալ բնականաբար համարեթանց կ'ըլլան անոնց, և այն աստե՛ն՝ գեղեցիկն և բարիին ու ճշմարտին զգացումը և սէրն է որ գերազանցապէս իշխելով՝ առաջնորդող կ'ըլլայ այդ մարմինին մէջ:

Զեմ ուզելի գիտ աւելի երկարաբանել բացատրութիւններս, որոնք բաւական ընդարձակ եղան արդէն, և յուսամ՝ թէ բաւական ալ պարզ և մեկին՝ կարենալու ձեզ ծանօթացունել ձայնական երաժշտութեան ատող-ջապահիկ օգուանները, որոնք մանկավարժական արդի գրութիւններուն զրեթէ հիմն կամ խորիւխ համարուած են՝ Տիւրէնիւ, Պուսկո-Տիւրուտէ ֆրանսացի նշանաւոր գրիչներէն և նաեւ շատ մը հռչակաւոր բժիշկներէ:

*
* *

Չայնական երաժշտութեան պաշտօն օգուաններուն տեղեակ ըլլալով այժմ, դուք այլ եւս շատ դիւրաւ կրնաք իմանալ՝ թէ աղայ մը կամ աղջիկ մը երբ փոքր հասակէն սկսի երգել սորովի, ձայնական կրթութիւններով ու երգերով մեծնալ, սրչափ ատող թոքերու աէր կ'ըլլայ և սրչափ ատող կուրծք ու ատող կազմութիւն կ'ունենայ, միանգամայն ազատ մնալով բարոյական զգոյր ու նախախնայութիւնէ, շատ հեռանկարութիւններէ ու ջղային ախտաբանք լինակներէ, որոնք արեւելոր օրինակները, ցուելով կը յայտնեմ, պակաս չեն մեր ազգային երկեսն վարժարաններուն մէջ:

Պարտաւոր ենք ուրեմն աճապարել, նախաձեռնողիք ըլլալ դպրոցական երաժշտութեան, և մեր կրթական ծրագրին՝ սահմանած, կոտակաւ, որ շատ լաւ է, մեր աշակերտներուն աշակերտութիւններուն անխախտ եօթն տարեկանէն սկսեալ՝ երգել սորովեցունել: Զեմ՝ պահանջներ որ անոնց սորոված երգերը բարձր բաներ ըլլան, կուսօ՛ի, վէճ-

ախի, Ռօսինիի, Շօքէնի, Սէն-Սաէնի լուրջ նուագները, Այսոյէն կամ Ֆրանսուէն կտորներ, Միլեհօնէ կամ Թոսովիտրան, ո՛չ, անոնց սորովածը թող պարզ երգեր ըլլան, ամենէն պարզ երգերը. մանկավարժի երգերն եթէ կ'ուզէք, բայց թող երգեն, երգեն միշտ, ամէն օր երգեն, զի երգը լաւ սնունդ մըն է անոնց: Հերթէ է որ երգուած երգերը զուարթ երգեր ըլլան, բարոյացուցիչ, աշակերտին խանդ տուող, սիրտը վատող և ուրախ պահող երգեր, և ահա՛ ըղձաքուծած նուագատակին շուտով կտրելի կ'ըլլայ հասնիլ:

Մեր ազգայութեանը՝ դպրոցին մէջ օրը ճիշդ հինգ անգամ երգելու սովորութիւն ունէինք. նախ՝ առաւօտեան աղօթքին, ցորեկը՝ ճաշէն առաջ և յետոյ, երեկոյեան՝ դրօսանքին և անգամ մըն ալ արձակուրդի պահուէն. շարժուան մէջ ալ ունէինք մանաւոր մամեր երգի և երեկոցեկան երաժշտութեան զատերու համար, և երկու անգամ ալ կ'առաջնորդէինք դաշաերը, ուր արձակ համարձակ ազատ ոգի մէջ մեր մանկական զուարթ երգերով մեր կուրծքը կը պարտաւէինք, և լսողները, ոտերը, ձորերը կը թրեւզացունէինք: Այսօր ալ այնպէս պէտք է ըլլայ. պէտք է որ մեր մանչ և աղջիկ դպրոցականներուն շատ երգել ստանք, անշուշտ առանց չափաւանդութեան, և բժշկի հսկողութեամբ, վարժեցունենք զանոնք երգելու, երգենք անոնց հետ, և այսպէս՝ մեր դպրոցներու մէջ առողջապահութիւնն աւելի օրինաւոր, աւելի կատարեալ ընելու ջանանք. որպէս զի մեր աշխատութիւնները, մեր կրթական ծրագրերը, մանկավարժական գրութիւնները մենեալ տառեր չմնան և ապագային համար ապարդիւն չըլլան:

Օր. Շալամէ ֆրանսուէնի իւր Մայրական դպրոց (l'Ecole maternelle) ընտիր աշխատութեան մէջ կը գրէ. «Երգերով չէ թէ միայն աշակերտներու թոքերը կամ ձայնի գործարարը կ'օգտուին, այլ նաեւ անոնց բոլոր միւս զգայարանները: Երգն անոնց վրայ կ'ընէ հոգեբանական լաւ ազդեցութիւններ, կը մարդէ անոնց զգացումները, գեղեցիկն և վեհին ճաշակը կու տայ, և կը կրթէ անոնց ականջը, նրբացնելով կը նրբացունէ

1. ՏԿ՝ «Արթական ծրագիր Ազգ. վարժարանաց» Կ. Պուսկո, 1897, էջ 21:

այդ զգայարանները, որ տեսութեան զգայարաններն հետ և մանկական հասակի կրթութեան մէջ ամենէն մեծ, ամենէն կարեւոր գերը կը խաղայ: Երգը՝ աշակերտներուն մը տալին վիճակին վրայ հզօր ազդեցութիւններ կ'ունենայ, կը մարէ անոնց ջլազրգոտութիւնները, կը հանգարանեցունէ անառակութիւնները, կ'անհետացունէ անոնց թմրութիւնը, և կը վարժեցունէ զանոնց օրինակելի կարգապահութեան »:

Ենչ լաւ միջոց ուրեմն մեր աշակերտները զսպելու, զանոնց աշխատութեան մշելու, որով ահա մի անդամ ընդ միշտ՝ վերջ կը դտնան այն սոսկալի պատիւները՝ որոնց գեռ վարժարաններուն մէջ կը անօրինութիւն յոյնած, զպրօցի տխուր միջավայրէն ձանձրացած, անաշխատասէր, ծոյլ կարծուած խել մը աշակերտներու և աշակերտուհիներու:

Օն ուրեմն, մէկդի թողէք այլ եւս հինգրէնք միջոցները, դիմեցէ՛ք երգին, և երգով հրաշքներ պիտի գործէք ձեր վարժարաններուն մէջ. այդու՝ սիրելի միջավայր պիտի յօրինէք ձեր աշակերտներուն շուրջը, միջավայր մը՝ զոր բնաւ թողուլ պիտի չուզեն անոնք: Տղաք կը սիրեն երգը, երգելն իրենց երջանակութիւնն է, անոնց համար բնական պէտք մըն է երգելը, ինչպէս կայստեղն ու վագելը: Կարելի՛ է երեսակայիլ մանուկներու համախմբութիւն մը՝ ուր երգ չլլայ. անհնական և անօրինակ բան մը կ'ըլլար այն, տխրատեսիլ կ'ըլլար և սգաւոր, կ'ըսէ Օր. Շալամէ, նման պարտէզի մը՝ որուն տունկերին արեւի երես չանանային ընտ:

Ո՛ր յարգելի դաստիարակներ և դաստիարակուհիներ, դուք՝ որ հայ մանուկներու, հայ մանկուհիներու դաստիարակութեան սուրբ գործին կը նուիրուիք, դուք այսօրուրնէ ուխտապիր եղէ՛ք հետեւելու այս քարոզին, և մեծ կարեւորութիւն տալով ձայնական երաժշտութեան և երգեցողութեան, ջանացէ՛ք որպէս զի ձեր մանչ և աղջիկ աշակերտներն վարժեցունէք երգի և երգելու. երգի՛ որ բարի է, որ սիրալոյսն է, որ վեհն է և առողջարար: Երգել չգիտցողն՝ իր կազմութեան մէջ տկարութեան թոյններ կը ցանէ տակաւ. բժշկական շատ մեծ նշմարտութիւն մըն է

Շիլլէրի այս խօսքը՝ թէ Չար մարդիկը երգ չունին. երգի բարեխար գերը շատանց հասկըցած էր Շիլլէր. ջանացէ՛ք որ շար չըսուիք, և յարութեան շաղի մէջ շատաշնորհք ձեր հոգածութեան ու խնամքին յանձնուած արեւիկայ մանուկները, ապագայի այդ փոքրիկ հայրերը:

Ահա ինչ որ կրցայ պատրաստել ձեզ Դպրոցական Երաժշտութեան խիստ կարեւոր հարցին առթիւ. կը վերջացունեմ զայն այն քաղցր յոյսով թէ յօտարակամ դուք գործադիր պիտի ըլլաք իմ բոլոր ըսածներուն:

Պարտաւոր էի խօսիլ ձեզ նստե գործական երաժշտութեան ազդեցութիւններուն վրայ. բայց որովհետեւ մեր աղքատիկ վարժարաններուն համար առ այժմ ստիպողական պէտք մը չէ այն, թէ՛ և ո՛չ դուրի կարեւորութեան, կը խօստանամ զայն մեր յառաջիկայ տարուան դասերուն նիւթ ընել, և կը փութամ արդ իմ անկեղծ շնորհակալութիւններս յայտնիլ ձեզ՝ ձեր այն լուրջ և յարատեւ ունկնդրութեան համար, որով պատուեցիք իմ փոնաքի գասերս:

ՏՕՐԹ. ՎԱՆԴԱՄ Բ. ԹՈՐՈՒՄԵԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԻՆ ԱՎՆԱՐԿ ՄԸ

Պատուհանէս դուրս կարկառած՝ կը դիտեմ խուր մը տղայոց, որոնց խնամքն ինձ յանձնեք են. ձիւ ճշտողիւն գարձած մանկունք զուարթագեմ՝ հրապարակին վրայ կը սուրհան դէս ու դէն:

Հետեւ ուրախ խմբէն՝ անհիւն մը կըկտն, Չեռքը ննօտին, աչքերն հողին սեւեռած, Գալարութեանց մէջ գերդ շոճի մ՝ տըխրազգած, Չէր մանակցիք կարգին միտրին ընկերաց:

Հայրի մը ձեռքը՝ վար իջալ կամացուկ, Յանկարէ իրեն դէմքն իր աչքին տակ գըրի ... Ընդոտտ ցատքեց վեր՝ այն տեսքէն շարաշուք ...

Մատուցս զոյց տալով իրեն՝ վրայ բերի. « Կ'ուզե՞ս աղիւս սըրտի մ՝ պատկեր՝ դէմքիդ վրայ, Գնա՛ նկերացդ հետ կանչուըռուէ՛ և խաղա՛ »:

Հ. Ա. ՏՐՈՅԵԱՆ